Հաստատում եմ՝
Հյուսիսային համալսարանի
ռեկտոր՝ Գ. Մակիչյան
դեկտեմբերի 2016թ.

Հաստատված է համալսարանի
գիտական խորհրդի 2016թ.
դեկտեմբերի 13-ի որոշմամբ (արձ. №19)

ԿԱՆՈՆԱԿԱՐԳ
ՀՅՈՒՍԻՍԱՅԻՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆՈՒՄ
ԱԿԱԴԵՄԻԱԿԱՆ ԱԶՆՎՈՒԹՅԱՆ ԱՊԱՀՈՎՄԱՆ

1. Սույն կանոնակարգը սահմանում է Հյուսիսային համալսարանում ակադեմիական ազնվության հասկացությունը, ակադեմիական ազնվության ապահովման սկզբունքները, այդ թվում, ակադեմիական ազնվության շեղումների կանխարգելմանն առնչվող հարաբերությունները, որպես գերակայություն սահմանելով ակադեմիական ազնվությունն ու անաչառությունը:

2. Սույն կանոնակարգը չի տարածվում Հյուսիսային համալսարանում մտավոր սեփականության օբյեկտների առնչությամբ ծագած՝ հեղինակային իրավունքի եւ հարակից իրավունքներին, գյուտերի, օգտակար մոդելների և արդյունաբերական նմուշների առնչությամբ ծագած հարաբերությունների վրա, որոնք արդեն իսկ կարգավորվում են համապատասխանաբար «Հեղինակային իրավունքի եւ հարակից իրավունքների մասին» եւ «Գյուտերի, օգտակար մոդելների և արդյունաբերական նմուշների մասին» ՀՀ օրենքներով եւ ՀՀ կառավարության կողմից ընդունված համապատասխան ենթաօրենսդրական ակտերով:

3. Սույն կանոնակարգը նպատակաուղղված է իրականացնելու Հյուսիսային համալսարանի առաքելությամբ սահմանված բարձրորակ մասնագետներ պատրաստելու հասարակական պատասխանատվությունը, շնորհիվ համալսարանում ներդրված գնահատման համակարգերին իրականացվող գիտակրթական գործունեության լիարժեք համապատասխանության եւ համալսարանում ակադեմիական ազնվության եւ անաչառության գերակայության արմատավորման:

4. Սույն կանոնակարգը տարածվում է համալսարանի ուսանողական համակազմի եւ աշխատակիցների ակադեմիական գործունեության բոլոր փուլերի վրա, այդ թվում՝ ընդունելության, ընթացիկ եւ ամփոփիչ գնահատման փուլերի, ինչպես նաեւ ուսանողների, հետազոտողների եւ պրոֆեսորադասախոսական անձնակազմի կողմից իրականացվող հետազոտական աշխատանքների վրա:

5. Սույն կարգի շրջանակներում որպես ակադեմիական ազնվություն է սահմանվում ձեւավորված այն հարաբերությունները, որոնք բացառում են ակադեմիական գործընթացներում ցանկացած կեղծիքները, անարժանահավատությունը, խտրականությունը, ոչ միասնական չափանիշերի կիրառումը, անվստահության ձեւավորումը:

6. Ակադեմիական ազնվության շեղումներ են համարվում գրագողությունը, մտավոր սեփականության օբյեկտների ապօրինի օգտագործումը, այդ թվում, ակադեմիական աշխատանքներում ոչ արժանահավատ տեղեկատվության օգտագործումը, իրական աղբյուրներին հղումների բացակայությունը, պարզ խմբագրումների միջոցով այլոց մտավոր հեղինակային աշխատանքները որպես սեփական ներկայացնելը, լաբորատոր հետազոտությունների արդյունքները կեղծված ներկայացնելը, արգելված տվյալների ձեռքբերումը եւ տարածումը, արգելված տեխնիկական միջոցների կիրառումը, ինչպես նաեւ Հյուսիսային համալսարանի ներքին կանոնակարգերին հակասող ցանկացած գործողություն, ներառյալ գնահատման համակարգում, որը որեւէ կերպ ազդում է ակադեմիական աշխատանի ընթացքի եւ արդյունքների վրա:

7. Ակադեմիական գործընթացներում շնորհիվ գնահատման գործընթացի անաչառության, թափանցիկության, հրապարակայնության, վստահության՝ գործընթացի մասնակիցների մոտ ակադեմիական ազնվության գերակայության ընկալում ձեւավորելու նպատակով ամբիոնի վարիչները եւ ֆակուլտետի ղեկավարները համապատասխանաբար պրոֆեսորադասախոսական կազմի եւ ուսանողական կազմի հետ առնվազն ուսումնական կիսամյակում մեկ անգամ պետք է կազմակերպեն քննարկումներ, ներկայացնելով ակադեմիական ազնվության ուղղությամբ համալսարանում ձեռնարկվող քայլերն ու դրանց արդյունքները, ինչպես նաեւ իրազեկեն,

որ սույն կարգով սահմանված ակադեմիական ազնվության շեղումները հիմք են վերջիններիս նկատմամբ պատասխանատվության միջոցներ կիրառելու համար:

8. Սույն կարգով սահմանված ակադեմիական ազնվության շեղումները կանխելու նպատակով համալսարանում ուսանողների և աշխատակիցների հետ կնքվող պայմանագրերում ակադեմիական ազնվության շեղումները սահմանվում են որպես պատասխանատվության ենթարկելու հիմք:

9. Սույն կարգի շրջանակներում ակադեմիական ազնվության շեղման հնարավոր դեպքերը կանխելու, վերհանելու եւ դրանց մասով համապատասխան զեկուցագիր ներկայացնելու իրավունքներն ու պարտականությունները պատկանում են համապատասխան ակադեմիական աշխատանքի նկատմամբ հսկողության իրավունք ունեցող աշխատակիցներին, որոնց կողմից իրենց նախընտրած մեթոդաբանությամբ իրականացվում է ընթացիկ հսկողություն, այդ թվում՝ գրավոր աշխատանքների փորձաքննություն՝ դրանցում առկա ակադեմիական ազնվության շեղումները գնահատելու նպատակով: Որպես գրավոր փորձաքննության մեթոդիկա կարող է կիրառվել՝ օրինակ՝ ակադեմիական աշխատանքի թվայնացման եւ առկա ծրագրային ապահովումների միջոցով (ինչպիսիք են օրինակ «ՊԼԱԳԻԱՏ» ծրագիրը) դրանց հնարավոր բնօրինակների բացահայտումը, արտաքին փորձաքննության ներկայացումը, ինչպես նաեւ օրենսդրությամբ չարգելված այլ միջոցներ:

10. Ակադեմիական ազնվության շեղումների բացահայտման դեպքում իրավասու համապատասխան աշխատակիցը շեղումների ակնհայտ փաստերի դեպքում ակադեմիական աշխատանքը գնահատում է անբավարար եւ զեկուցագիր է ներկայացնում համալսարանի ռեկտորին՝ համապատասխան պատասխանատվության միջոց կիրառելու նպատակով: Զեկուցագիրը պետք է պարունակի տեղեկություն ակադեմիական ազնվության շեղումների նկարագիրը, ինչպես նաեւ շեղումների առնչությամբ ուսանողի կամ աշխատակցի համաձայնության կամ անհամաձայնության վերաբերյալ վերջիններիս գրավոր կարծիքը համապատասխան բացատրություններով:

11. Զեկուցագրի հիման վրա, վերջինիս հետ անհամաձայնության բացակայության դեպքում ռեկտորը 10-օրյա ժամկետում կիրառում է համապատասխան պատասխանատվության միջոց:

12. Համալսարանում ուսումնառության կամ աշխատանքային գործունեության ընթացքում առաջին անգամ ակադեմիական ազնվության շեղում թույլատրած ուսանողի կամ դասախոսի նկատմամբ կիրառվում է գրավոր նախազգուշացում, երկրորդ անգամ՝ գրավոր խիստ նախազգուշացում՝ երրորդ անգամ ուսանողը կամ համալսարանի աշխատակիցը հեռացվում է համալսարանից:

13. Ակադեմիական ազնվության շեղումների հետ անհամաձայնության առկայության դեպքում զեկուցագիրը ստանալուց հետո 5-օրյա ժամկետում հարցը վերջնական քննարկելու եւ որոշում կայացնելու նպատակով ռեկտորը հրավիրում է ռեկտորատ՝ որին ըստ իր ցանկության մասնակցում է նաեւ ակադեմիկական ազնվության շեղում թուլատրած ուսանողը կամ աշխատակիցը: Ակադեմիական ազնվության շեղման հետ անհամաձայնության դեպքում ուսանողի կամ աշխատակցի կողմից ներկայացվում են լրացուցիչ բացատրություններ եւ պարզաբանումներ:

14. Զեկուցագիրը քննարկվում է ռեկտորատում եւ ակադեմիական ազնվության շեղման հիմքով պատասխանատվության միջոց կիրառելու մասին որոշում ընդունվում է բացառապես հիմնավոր փաստարկների առկայության դեպքում, որի հիմքով ռեկտորը կիրառում է համապատասխան պատասխանատվության միջոց: Ակադեմիական ազնվության շեղման հիմքերի բացակայության դեպքում ռեկտորատում որոշում է կայացվում պատասխանատվության միջոց չկիրառելու եւ ակադեմիական աշխատանքը կրկնակի անգամ գնահատելու մասին:

15. Սույն կանոնակարգով նախատեսված պատասխանատվության միջոցներ կիրառելու մասին որոշումները հրապարակվում են համալսարանի պաշտոնական կայքում: